ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 ՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 44

ՔԱՂ.ՄԵԽԱԿ ԿԱՐԱԿԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով ,Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 52-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մեխակ Կարակեյանի դիմումը՝ **որոշում եմ.**

Հարգել Մեխակ Կարակեյանի խնդրանքը և թույլատրել վերջինիս քանդել իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում գտնվող (համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N12032018-07-0052 վկայականի) շինությունը՝բնակելի տունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 18 թ.մարտի 19
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 ՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 45

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Սոնյա Աբրահամյանի դիմումը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունը կառուցվել է ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Սոնյա Աբրահամյանին, Արթուր Մարգարյանին և Անդրանիկ Մարգարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի Նոր թաղամաս 1-ին փողոց թիվ 13 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները՝ բնակելի տուն՝ 775.1 քմ և փոստրակ 6.4 քմ համարել օրինական:

2. Սահմանել,որ հողամասի սեփականտերերը

1) Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 2031900 /երկու միլիոն երեսունմեկ հազար ինն հարյուր / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 18թ.մարտի 21
գ.Վերին Պտղնի